ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսականվարչության 2023 թվականի ընթացքում կատարած հիմնական աշխատանքների վերաբերյալ

1. ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ոլորտային, ապարատի պահպանման ծախսերի ՀՀ 2023-2025 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ 2024թ. բյուջետային ֆինանսավորման) հայտերը կազմվել և ներկայացվել են ՀՀ Ֆինանսների նախարարություն:
2. 2023թ. պետական բյուջեից մարզպետի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանացանկերի կազմման և առաջարկությունների ներկայացման աշխատանքների ապահովում:
3. Մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 166 ՊՈԱԿ-ների կողմից վերջիններիս կանոնադրություններով սահմանված ընթացակարգով ներկայացված եկամուտների և ծախսերի նախահաշիվները (փոփոխված նախահաշիվները) ընդունվել, ուսումնասիրվել, անհարժեշտության դեպքում դրանցում կատարվել են ճշգրտումներ և ներկայացվել են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի հաստատմանը:
4. Մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 166 հանրակրթական պետական ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացրած տարիֆիկացիոն (վարձաչափային) մատյանների, տարեկան նախահաշիվների (պետպատվեր և արտաբյուջետային միջոցներ) և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքների ապահովում:
5. ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի թիվ 104-Ն հրամանի համաձայն մարզային ենթակայության թվով 166 պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացրած 2022 թվականի տարեկան և 2023 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվություններն ընդունվել, ստուգվել, անհրաժեշտության դեպքում դրանցում կատարվել են ճշգրտումներ: Կազմվել են համապատասխան գրություններ, իրականացվել է վերլուծություն, նախահաշվային և փաստացի ցուցանիշների միջև շեղումների վերաբերյալ կազմակերպությունների կողմից կազմված բացատրագրերը ընդունվել, ուսումնասիրվել են, ինչպես նաև ամփոփվել և ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:
6. ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2023թ. բյուջեների նախագծերի նախապատրաստման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվել է մեթոդական աջակցություն:
7. Մարզի համայնքների 2023թ. հաստատված բյուջեները ՀՀ օրենսդրությամբ սահմանված մեթոդաբանությանը համապատասխան ուսումնասիրվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
8. 2023 թվականի (հունվարից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ) յուրաքանչյուր ամիս մարզի համայնքների բյուջեների եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

9. 2023 թվականի չորս եռամսյակների մարզի համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի (ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման) վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
10. Յուրաքանչյուր ամիս մարզի համայնքների բյուջեների պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
11. Յուրաքանչյուր ամիս մարզի համայնքների կողմից համայնքապետարանների աշխատակազմերի, ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների 2023թ. նախատեսված աշխատավարձերի ֆոնդերի մասին տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
12. Յուրաքանչյուր ամիս ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջետային հիմնարկների, ՀՈԱԿ-ների և աղբահանության վճարների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
13. Յուրաքանչյուր ամիս ՀՀ Շիրակի մարզի համայնքների աղբահանության ոլորտի եկամուտների, աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
14. Յուրաքանչյուր ամիս ՀՀ Շիրակի մարզի համայնքների փոխադրամիջոցների և անշարժ գույքի հարկի մասով առաջացած ապառքների վերաբերյալ տեղեկատվությունները ընդունվել, վերլուծվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
15. Մարզի համայնքների բյուջեներին ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ ըստ առանձին համայնքների ներկայացված ելակետային տվյալները ընդունվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
16. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» հրամանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Ամասիա և Արթիկ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների

իրականացման նկատմամբ իրականացվել է իրավական հսկողություն: Իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

17. ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարաններից ստացվող՝ համայնքի ավագանու որոշումները ուսումնասիրվել և համապատասխանության վերաբերյալ ներկայացվել են եզրակացություններ:
18. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար գնման ընթացակարգերը կազմակերպվել և հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկատուում:
19. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակա ՓԲԸ-ների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերը հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկատուում:
20. ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից 2022 թվականի 4-րդ, 2023 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում իրականացված գնումների վերաբերյալ տեղեկատվությունները վերլուծվել, ամփոփվել և ներկայացվել են ՀՀ Ֆինանսների նախարարություն:
21. ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակա ՓԲԸ-ների, ՊՈԱԿ-ների պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ինչպես նաև բնակչության կողմից վճարովի ծառայությունների մատուցման տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվները, հաստիքացուցակները հաստատելու և տնօրենների վարձատրության չափը սահմանելու և դրանցում կատարվող փոփոխությունների մասին որոշումները նախապատրաստվել և ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզպետի հաստատմանը: ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակա ՓԲԸ-ների տարեկան գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե վճարվող շահութաբաժինների չափերիհաստատման մասին որոշումները նախապատրաստվել և ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզպետի հաստատմանը:

    2023 թվականի հաշվետու ժամանակահատվածում սահմանված ժամկետներում կազմվել և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի 2022 թվականի տարեկան և 2023 թվականի առաջին եռամսյակի, կիսամյակի, ինն ամիսների ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունները՝ թվով 27 ծրագրերի համար, ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանով հաստատված Հ-1 և Հ-7 օրինակելի ձևերով: Հիշյալ հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետներում մուտքագրվել են «LSFinance» համակարգ:
22. Սահմանված ժամկետներում «Քլայնթ Թրեժերի» համակարգ են մուտքագրվել 2023 թվականի թվով 27 ծրագրերի նախահաշիվները, ժամանակացույցերը, պայմանագրերից քաղվածքները:

23. Յուրաքանչյուր ամիս սահմանված ժամկետներում ֆինանսավորվել են մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 152 ՊՈԱԿ-ները՝ 13 ծրագրերով, այդ նպատակով կազմվել և «Քլայնթ Թրեժերի» համակարգ են ներմուծվել հավաստագրեր, վճարման հանձնարարագրեր:
24. Սահմանված ժամկետներում կատարվել են ապարատի պահպանման ծախսերի՝ աշխատակիցների հունվար-դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարների, պարգևատրումների հաշվարկներ և վճարումներ, պայմանագրային պարտավորությունների ձևակերպումներ և մարումներ՝ «Քլայնթ Թրեժերի» համակարգ են ներմուծվել բանկային փոխանցագրեր, հավաստագրեր, վճարման հանձնարարագրեր:
25. Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել են դիմումատու քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզպետի թվով 57 որոշումների նախագծեր, որոնցով դրամական օգնություն է ստացել թվով 1025 քաղաքացի:
26. Սահմանված ժամկետներում «Tax Service» համակարգ են ներմուծվում աշխատանքի ընդունված և աշխատանքից ազատված անձանց անհատական տվյալների գրանցման հայտերը, ինչպես նաև ամիս եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվետվությունները:
27. 2023 թվականի ընթացքում գնումների «Armeps» համակարգ են մուտքագրվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար անցկացված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերը: Պարբերաբար ներմուծվել են նաև պայմանագրերիփոփոխությունները:
28. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 2023 թվականին հավանության է արժանացել մարզի թվով 6 համայնքների համար սուբվենցիոն ծրագրեր: Մարզի համայնքներին Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից հատկացվել է կապիտալ սուբվենցիայի թվով 36 ծրագիր:
29. ՀՀ կառավարության 2023 թվականի որոշումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից մարզի թվով 1 համայնքի հետ կնքվել է կապիտալ սուբվենցիայի հատկացման թվով 2 պայմանագրեր՝ 375.5 մլն դրամ գումարի չափով, իսկ մարզի թվով 4 ՊՈԱԿ–ի հետ՝ կապիտալ դրամաշնորհների հատկացման թվով 4 պայմանագրեր՝ 115.9 մլն դրամ գումարի չափով, ինչպես նաև մարզում առանջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար կնքվել է թվով 3 պայմանագիր, 122.9մլն. դրամ գումարով:
30. ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ իրականացվել են վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջադրանքների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներ և դրանց վերաբերյալ մշակվել՝ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ:
31. Ֆինանսական վարչության աշխատակիցների 2023թ. աշխատանքնային ծրագրերը կազմվել, մուտքագրվել և ներկայացվել են գլխավոր քարտուղարի հաստատմանը:

32. Ֆինանսական վարչության առջև դրված մի շարք խնդիրների և գործառույթների իրականացման շրջանակներում, ինչպես նաև գլխավոր քարտուղարի գիտությամբ հրավերել են խորհրդակցություններ:
33. ՀՀվարչապետի աշխատակազմից, ՀՀ նախարարություններից, կազմակերպություններից և ֆիզիկական անձացից ստացված հանձնարարականները, գրությունները և դիմումները քննարկվել և սահմանված ժամկետներում համապատասխան ընթացք են տրվել:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ